ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ, ՈՐ Ի ՓԼԷՆՍԻԼՎԱՆԻԱ, ԱՄՆ

Հոգեկան մեծ գոհունակութեամբ տեղեկացանք Ամերիկայի Արեւելեան թեմի բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից, որ առաջիկայ մայիսի 1-4-ը, Փլենսիլվանիայի Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ կայանալու է թեմի հոգեւորականաց տարեկան ժողովը:

Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Հայ Եկեղեցու ուխտեալ սպասաւորներիդ, որ այքն ի Սուրբ Էջմիածին եւ սիրտն ի խառն Արարատ, մեծ նուիրումով ու ջանասիրութեամբ հոգեւոր Ձեր անսակարկ ծառայութիւնն էք մատուցում հեռաւոր մայրցամաքում կայք հաստատած բարեպաշտ մեր զաւակաց:

Սիրելիներ. հոգեւորականաց առաքելութիւնը առաւել դժուարին է ներկայիս նիւթապաշտ ու աշխարհայնացած կեանքի պայմաններում, քանզի կոչուած ենք մեր անձը օրինակ դարձրած՝ անձնականը սուզած անանձնական մեր ձգտումներում ու տեսիլքներում, Աստուածաբանի կենսապարգեւ խօսքին հաւատարիմ պահել Մեզ վստահուած Քրիստոսի հօտը:

Ծանօթ ենք Ձեզնից շատերի անձնուրաց գործունէութեանը, ամերիկահայոց կեանքի մէջ նոր հայրենիք վերակերտելու Ձեր անձկագին փափաքին, եւ լաւատես ենք, որ Ձեր ծառայութեամբ անվրդով ու անխոով էք պահելու Ձեր խնամքին յանձնուած «փոքր ածուն»:

Ցիրաւի, Դուք էք, որ կոչուած էք հայոց ազգային-եկեղեցական կեանքից վանելու օտարացման ու ձուլման մեզը՝ մեր ժողովրդի զաւակաց կեանքը խարսխելով քրիստոնէական ու հայրենական մեր ըմբռնումների ամրակուռ վէմի վրայ:

Բարձր ենք գնահատում ամերիկեան հզօր մշակոյթի ու քաղաքակրթութեան հոսանքի առջեւ կուրծքն ի հողմ հայութեան հաւատքի ու մշակոյթի պահպանութեանն ուղղուած Ձեր բոլոր ջանքերը:

Ամենաջերմ սիրով ու Հայրապետական օրհնութեամբ կրկին անգամ Մեր ողջոյններն ենք յղում Ձեզ՝ աղօթքով ջերմեռանդ, որ հոգեւորականաց Ձեր այս Համագումարում նոր գաղափարներ ու մտքեր ծնուեն Ձեր հոգում՝ դրանք իրականացնելու կամքով ու վճռականութեամբ:

Թող «Աստուած ընդ մեզ է» գիտակցութեամբ՝ հոգեւորականաց Ձեր համախմբումը դառնայ Աստծու ձայնի արձագանքը ամերիկահայոց Արեւելեան թեմի Մեր բարեպաշտ զաւակաց կեանքում:

Ողջ լերուք ի Տէր՝ զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 27 մարտի
յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 21